# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2019 թվականի մայիսի 17-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

## ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ «ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-19/14»

Բնապահպանության նախարարության կարիքների համար «Համակարգչային տեխնիկայի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-19/14» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2019 թվականի մայիսի 16-ին գծից դուրս ստացված հարցադրումը և դրանց վերաբերյալ տրամադրված պարզաբանումը՝

**Հարցադրում N 1:** Հարգելի պատվիրատու, խնդրում ենք պարզաբանել, թե ի՞նչու չափաբաժիններից մի մասի ապրանքների համար սահմանված է «Երաշխիքային սպասարկման ապահովում արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնում (հրավերով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացնելիս տրամադրվում է նաև սպասարկման կենտրոնի տվյալները) կամ արտադրողից տեղեկանք այն մասին, որ ապրանքն արտաադրված է Հայաստանի Հանրապետությունն ընդգրկող տարածաշրջանում սպառման և սպասարկման համար" պահանջ, իսկ մնացածի համար՝ ոչ: Նման պահանջը էապես փոքրացնում է ընթացակարգի հնարավոր մասնակիցների քանակը (և կարող է որակվել խտրական և հետևաբար հակասում է գնումների մասին ՀՀ օրենքին) և փորձը ցույց է տալիս, որ շատ հաճախ պաշտոնական սպասարկման կենտրոնները ավելի որակով և օպերատիվ չեն իրականացնում երաշխիքային սպասարկման պարտականությունները, քան դա անում են համակարգչային տեխնիկայի բնագավառում երկար տարիների փորձ ունեցող ընկերությունները: Ավելին, սպասարկման կենտրոնների նկատմամամբ պատվիրատուն ոչ մի սանկցիա չի կարող կիրառել պարտավորությունները ժամանակին չկատարելու դեպքում, քանի որ նրանց հետ որևէ պայմանագրային հարաբերություն չունի:

**Պարզաբանում N 1:** Մասնակցի հարցման ներկայացված պահանջը պայմանավորված է այն հանգամանքով, որ երաշխիքային սպասարկման ժամկետի ավարատից հետո տարածաշրջանի համար չարտադրված նմանատիպ ապրանքների հետագա սպասարկումն ու շահագործումը շահավետ չէ և որակյալ ապրանքի ձեռքբերման և երաշխիքային սպասարկման պահանջը չի սահմանափակում մասնակիցների մասնակցությունը մրցույթին: Հարցման մեջ ընդգրկված հետագա շարադրանքում ներկայացված տեսակետը հանձնաժողովը չի կիսում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-19/14» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Լ.Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ **(011) 818 514:**
Էլեկտրանային փոստ՝ gnumner.mnp@yandex.ru:

«ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-19/14» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով